

ՀՀ շրջակա միջավայրի նախարար
պարոն Ն. Մաթևոսյանին

Հարգելի պարոն նախարար

«Իջևանի բենտոնիտ կոմբինատ» ԲԲ ընկերությունը ՀՀ Տավուշի մարզի Սարիգյուղի բենտոնիտային կավերի հանքավայրի տարածքում իրականացնում է օգտակար հանածոյի արդյունահանում համաձայն 06.11.2012թ.-ի ՆՇԱԹՎ-29/200 ընդերքօգտագործման թույլտվության:

Հանքավայրի շահագործման ընթացքում ընկերության կողմից կատարվում են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիայի պարբերական չափումներ,
2. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ արտադրական հրապարակի տարածքում,
3. հանքավայրի և հարակից տարածքների կենսաբազմազանության մոնիթորինգ՝ դիտողական զննման եղանակով:

Ստորև ներկայացնում եմ 2025 թվականի ընթացքում Սարիգյուղի բենտոնիտային կավերի հանքավայրի տարածքում ընկերության կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները՝ ըստ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման հավելված 2-ով սահմանված ձևաչափի:

«Իջևանի բենտոնիտ կոմբինատ» ԲԲԸ
գլխավոր տնօրեն՝



Ա. Գիլյան

**ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԱՍՓՈՓ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Հաճախականությունը	Միջինացված արդյունքը
1	2	3	4	5	6
Մթնոլորտային օդ	Բացահանք	Անօրգանական փոշի (SiO ₂ 20-70%)	Չափում ավտոմատ սարքերով	Աշխատանքների ընթացքում, յուրաքանչյուր շաբաթ	0.071 մգ/մ ³ ^{1/}
Մակերևութային ջրեր	Նախատեսված չէ				
Ստորգետնյա ջրեր	Նախատեսված չէ				
Հողային ծածկույթ	Արտադրական հրապարակի տարածք	Նավթամթերքներ	Դիտարկում, նմուշարկում	2025 թվականի ընթացքում, ամսական մեկ անգամ	Նավթամթերքների արտահոսքի հետքեր չի դիտարկվել
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ	Հանքավայրի և հարակից տարածք	ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ	Դիտարկում դաշտային պայմաններում	2025 թվականի ընթացքում մեկ անգամ	Տարածքում դիտարկվել են <i>Bromopsis variegata</i> , <i>Phleum phleoides</i> , <i>Phleum pratense</i> , <i>Poa trivialis</i> , <i>Vicia tenuifolia</i> , <i>Carex capitellata</i> , <i>Carex tristis</i> , <i>Taraxacum steveni</i> , <i>Koeleria albovii</i> , <i>Dactylis glomerata</i>

¹ Հավատարմագրված լաբորատորիայի կողմից փոշու մոնիթորինգի իրականացման խնդիրների հետ կապված, մոնիթորինգի արդյունքը նշվում է ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից մինչև տասը հազար բնակչության դեպքում փոշու ֆոնային կոնցենտրացիաների վերաբերյալ ժամանակավոր առաջարկությունների /https://meteomonitoring.am/web/render/text/sub_breadcrumb_id/20/air/concentration/

					<p>տեսակները: Թփուտային բուսականությունը ներկայացված է հիմնականում <i>Rosa spinosissima, Spiraea hypericifolia</i> և <i>Rhamnus cathartica</i>, հազվադեպ՝ <i>Paliurus spina- christi</i></p> <p>տեսակներով: ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված, էնդե- միկ տեսակներ չեն դիտարկվել:</p>
Աղմուկ և թրթռում	Նախատեսված չէ				
Ոչ վտանգավոր թափոններ	Նախատեսված չէ				
Վառելանյութերի պահեստարաններ	Հանքավայրի տարածքում վառելանյութերի պահեստարաններ չկան				
Ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուց- վածքներ	Հանքավայրի տարածքում ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ չկան				
1	2				
Լեռնատրանսպոր- տային սարքավորումների աշխատանքային	Բոլոր սարքավորումները անցել են տարեկան տեխնիկական ստուգում				

վիճակ

«Իջևանի բենտոնիտ կոմբինատ»
ԲԲԸ գլխավոր տնօրեն
Ա. Գիլյան

(պաշտոնը, անունը, ազգանունը)





11.02.2026թ.
(ստորագրությունը, ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

**ՀՀ Տավուշի մարզի Սարիգյուղի բենտոնիտային կավերի հանքավայրի տարածքում
մշտադիտարկման կետերի սխեմատիկ քարտեզ**

